«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Պատկերավորման միջոցները Միսաք Մեծարենցի ստեղծագործություններում»

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Պողոսյան Գայանե

ՂԵԿԱՎԱՐ՝ Ղազարյան Արմինե

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՄՅՈՆՈՎԿԱՅԻ ՀԻՄՆ. ԴՊՐՈՑ

Բովանդակություն

Ներածություն 3
Պատկերավորման միջոցները Միսաք Մեծարենցի ստեղծագործություններում 4
Բնությունը և գյուղի պատկերները Մեծարենցի ստեղծագործություններում: 16
Մեծարենցի սիրո երգերը 24
Եզրակացություն 26
Օգտագործված գրականության ցանկ 27

Ներածություն

Խոսքի պատկերավորման միջոցներն են մակդիրը, համեմատությունը, փոխաբերությունը, անձնավորումը, չափազանցությունը և նվազաբերությունը:

Մակդիրը գեղարվեստական որոշիչն է, որը առարկային վերագրում է փոխաբերական հատկանիշ, բնորոշում է առարկան կամ երևույթը, արտահայտում է որոշակի վերաբերմունք: Բոլոր մակդիրները որոշիչներ են, բայց ոչ բոլոր որոշիչներն են մակդիր: Օր. ՝ ծով վիշտ, քար սիրտ, չինարի բոյ, երգող քամի և այլն:

Համեմատությունը մի առարկայի բնորոշումն է մի ուրիշ առարկայի միջոցով, որոնք ունեն նույն հատկանիշը: Գործածվում է ասես, կարծես, նման, հանգույն-նման, որպես հանց, զերթ, պես, ինչպես և այլ կապերը:

Փոխաբերություն. մի առարկայի կամ մի երևույթի անունը նմանության հիման վրա փոխարինվում է մեկ այլ առարկայի կամ երևույթի անունով: Այն հենվում է հատկանիշների նմանության կամ ընդհանրության վրա: Հիմքում ընկած է համեմատությունը՝ առանց, պես, նման, կարծես, ասես, զերթ բառերի օգտագործման: Փոխաբերության մեջ կան շատ մակդիրներ, բայց այստեղ շատ շեշտված է փոխաբերական իմաստը: Օրինակ՝ «Ալևոր կամրջի հոնքին ծիծառի մի բույն եմ հիշում»: «Ամպ ու լուսին իրար փարված՝ դուրս են գալիս միասին»:

Անձնավորումը խոսքի պատկերման այն միջոցն է, երբ անշունչ առարկաներին, բնության երևույթներին, թռչուններին ու կենդանիներին վերագրվում են մարդկային (անձերի) հատկանիշներ: Այսինքն դրանք ձեռք են բերում մարդկային հատկանիշներ՝ խոսելու, մտածելու, ծիծաղելու, տխրելու…

Օր. ՝ Օրոր էր ասում աշունն անտառին,
Բայց դեռ անտառի քունը չէր տանում,
Առվակը ծիծաղում էր,
Սիրտս երգում էր:

Չափազանցություն. խոսքում չափազանցված է ներկայացվում առարկան կամ նրա հատկանիշը. շատ է օգտագործվում էպոսում, հեքիաթներում, լեգենդներում:

Օր. ՝ Կտորները երկինք թռան ու գնում են մինչև էսօր:
Արյունը հոսում էր էն Քռի նման
Մելիքի զորքը եկավ, գետի ջուրը խմեց, գետը ցամաքեց:

Նվազաբերությունը չափազանցության հակառակ երևույթն է, երբ առարկան ներկայացվում է փոքրացված, նվազեցված ձևով:

Գեղարվեստական խոսքում շատ ստեղծագործողներ են իրենց խոսքը համեմել պատկերավորման միջոցներով:

Պատկերավորման միջոցները Միսաք Մեծարենցի ստեղծագործություններում

Արևելքի ժողովուրդների կյանքն անխզելիորեն կապված է բնության հետ. նրանք աստվածացնում են բնությունը, անձնավորում նրա երևույթներն ու բոլոր դրսևորումները: Ըստ արևելյան բնապաշտության՝ անխզելի կապ կա մարդու և տիեզերքի, բնության մեջ: Բնությունը զգացող մարդը զգում է նրա ակնարկը և ակնարկին պատասխանում ակնարկով, քանի որ բացահայտ ուղղակի խոսքը կորցնում է լիարժեքի ու ճշմարիտի տարրերը: Բնության ակնարկն է ծնում տեսազգացողական պատկերի գեղագիտական ընկալումը և ազնվացնում, քնքշացնում, զգայուն դարձնում մարդու հոգին:

Այս ամենը հրաշալիորեն է արտացոլվում Մեծարենցի «Աքասիաներու շուքին տակ» սոնետի մեջ, որտեղ մեծարենցյան բնապաշտությունը փայլում է իր բոլոր նրբերանգներով: Մեծարենցի լուսաբաղձ հոգու համար ևս բնությունը դյութական հանգրվան է, միայնակ մարդու դրամատիկ, լուռ ապրումների սպեղանին: Այն ներկայացված է Արևելքի մտածողությանը բնորոշ գեղարվեստի փիլիսոփայությամբ: Զգացմունքի, ապրումի համամարդկային բովանդակությունն առնչակցում է Արևելքի և Արևմուտքի գրականությունները: Ինքնագնահատանքի արժեք ունի Մեծարենցի գեղագիտական սկզբունքն այս ամենի առումով:

«Բանաստեղծը բնության ցոլացումը պետք է ըլլա. թե ոչ՝ բանաստեղծ չէ իրապես. քերթվածերը իբրև բառ պետք է ունենան տերևին թրթռումը, թռչունին դայլայլը, մարդերուն գորովը, դաշտին ու լեռան մշտանույն զորությունը: Բանաստեղծին ձայնը տիեզերական հարաբերակցության մը լարը պետք է ըլլա, բոլոր գոյություններու համադրական թրթռումովը տրոփուն»:

Հավերժ պատանի Միսաք Մեծարենցի մասին խոսելիս ակամա հիշվում է 20-րդ դարի ֆրանսիական արձակի յուրօրինակ ու ինքնատիպ ներկայացուցիչ Անտուան Դը Սենտ էքզյուպերիի խոսքը. «Ես եկել եմ մանկությունից: Եկել եմ այնպես, ինչպես որևէ երկրից են գալիս: Ես այնքան էլ վստահ չեմ, որ մանկությունից հետո ապրել եմ»:

Բնապաշտությունը (պանթեիզմը) իր արմատներով կապված է Մեծարենցի մանկության, հայրենի ծննդավայրի հետ:

Մեծարենցի քնարերգության մեջ բնապաշտությունն, ինչպես եվրոպական գրականության մեջ, դրսևորվում է իբրև ռոմանտիզմի արտահայտության ձևերից մեկը, իբրև բնապաշտություն՝ ամեն կատարյալ բան բնության մեջ տեսնելու իմաստով: Բնության կատարելության մեջ Մեծարենցը գտնում է իր ներքին տարերքի ազատությունը և պարփակվում արտաքին անբնական ու կեղծ վիճակներից:

Բնության հանդեպ պատանի բանաստեղծի պաշտամունքն ունի խորը ենթատեքստ: Հասարակական իրական կյանքի տառապագին դառնությունները նա ձգտում է մոռանալ բնության հմայքներին մտերմիկ ապավինելով և սրտագին–հուզառատ սքանչացման մեջ:

Բնության, սիրո և անանձնական մարդասիրության երգերով Մեծարենցը շողարձակում լուսավոր ակոս է բացում հայ քնարերգության մեջ՝ հայ գրականություն բերելով իր ժողովրդին բնորոշ տոհմիկ գծերը, կյանքի կարոտն ու երջանկության երազանքը:

Մաքրությամբ շնչող հայրենի ազատ հորիզոնների երգը, բնականոն, հեթանոս գեղեցկությունը և թարմությունը գալիս են հակադրվելու պատանի բանաստեղծի՝ կյանքի նկատմամբ կարոտաբաղձ, լեցուն հոգուն ու մտքին՝ անհաղորդ նրա գրական հակառակորդների բիրտ ու չար հոգիներին, նրանցից շատերի անձուկ, անարվեստ գրական վայրիվերումներին: Բնության նվագները մեծարենցյան քնարերգության մեջ ստանում են փիլիսոփայական իմաստավորում: Խորհրդապաշտների (սիմվոլիստ) նախասիրած թեման օժտվում է անկրկնելի հնչերանգներով ու երանգներով:

Պարզ, լուսածածան հրաշալի գիշերների երգը, շափյուղազարդ երկինքների, բազմաբուրյան հովերի, դաշտերի անդորրության կախարդիչ հմայքը ներխուժում են մարդկային հոգին՝ նրա հիվանդոտ, ցավոտ տխրամութ խորշերը լցնելով երջանկածին ցնորքով և հույսով: Գիշերը Մեծարենցի ստեղծագործությունների մեջ դառնում է երջանկության խորհրդանիշ, գիշերվա մեջ բանաստեղծը տեսնում է ոչ թէ մռայլն ու խավարը, այլ լուսեղեն կողմերը, արեգակնային ուղիները, որ համադրվում են արևերգության հետ: Գիշերվա մեջ դադարում են ցերեկվա ժխորն ու մարդկային տառապանքն ու ցավը, բռնությունն ու ոճիրը: Մաքրվում, հանդարտվում, սրբանում է ամեն ինչ: Բացվում է քնքշության և սիրո, գեղեցկության և քնարերգության աշխարհը: Տիեզերքը, համայն բնությունը լցվում է սիրով ու համբույրով: Երկիրը դառնում է լուսաճաճանչ, հաշիշով ու բալասանով օծուն: Իրականանում են ասես մարդկանց երջանկության երազանքները:

Սակայն չնայած գիշերային բնությունն ու տիեզերքը ամբողջությամբ լեցուն են կախարդական, անկրկնելի գեղեցկությամբ և արբեցնող համբույրներով ու ոգեղենիկ լույսով, քնարական հերոսը զուրկ է իր երազած միակ համբույրից:
Երազած, սակայն չգտած, չվայելած, անփոխադարձ սիրուց մաշվում է բանաստեղծի հոգու լույսը, և ցուրտ ու խավար աշխարհին տրվելուց ՝ սպառվում:
Ցնցող է ցնծագին, լույսով ու լուսնով զարդարված գիշերվա և հոգու լույսը քիչ-քիչ մաշող քնարական հերոսի հակադրությունը:

Ցնծագին գիշեր է, լույս ու լուսին՝
Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կմաշի:

Միսաք Մեծարենցի «Աքասիաներու շուքին տակ» քերթվածը անզուգական է: Այն միևնույն ժամանակ և՛ բնության մեղմահնչյուն, կախարդական, հոգիները վեհացնող և հուզող մի համանվագ է, և՛ նրբահյուս լույսի շղարշների երանգներով ու լուսաստվերներով հյուսված բնապատկեր-համայնապատկեր:
Թվում է՝ հնչում է վաղ միջնադարից եկող հոգեցունց մի մեղեդի, և մարմնավորում, շնչավորվում են բուրումներով օծուն իրիկնային զեփյուռը, լույսից ու տապից արբեցած ու օրորվող, նորահարսի պես ճերմակահանդերձ աքասիաները, թափանցիկ մթնշաղի միջից մեղմությամբ վար իջնող ծաղկաթերթերը , շողարձակող և մանկան արցունքի պես վճիտ շատրվանի ցայտքն ու նրան խառնվող լուսե հեղեղը:
Ընթերցողի ականջին լսելի է դառնում շատրվանի հեծեծող «հեշտական նվագը»:
Աշխարհը պարուրվում է երազային գույների ու նվագների կախարդանքով, դառնում թովիչ, տենչալի մի վսեմ հեքիաթ, ուր մարդը մաքրվում, վեհանում, ազնվանում է, և նրա հոգուն իջնում է «երազ մը բուրյան»:
Արևի, գարնան, ցայգալույսի ու ցայգանդորրի, գիշերների ու իրիկվա քնարերգությունը հագենում է նրբերանգի, ինքատիպ գույների և հնչյունների ալեծածան բաբախյունով:
Մեծարենցը բոլորովին մի այլ տեսանկյունից է տեսնում և իմաստավորում հայրենի լեռնաշխարհը, իրերն ու երևույթները:
Բնությունը, նրա բաղադրամասերը բանաստեղծի համար դառնում են հավերժության ճանապարհին կանգնած ուղենիշեր, որոնց անմիջական ազդեցությամբ Մեծարենցը մղվում է փիլիսոփայական ընդհանրացման:
Հաճախ են բանաստեղծի տենչ-երազները վերածվում գեղեցիկ պատկեր-խորհրդանիշ-փոխաբերությունների:

Դրանք ի հայտ են գալիս ծովափից ալիքների մեղմ ծփանքի հետ հեռացող նավակների, տարագնացիկ մեղուների տեսքով: Մեծարենցի գրչի տակ իրերն ու առարկաները ոգի են առնում, շնչավորվում ՝ որպես բարի, հարազատ, քնքուշ ու բանաստեղծական էակներ: Զովը հանդես է գալիս՝ որպես տենչալի մի խաղընկեր կամ պատուհանը չարաճճիորեն մատնահարող մի դեռատի աղջնակ: Առվակը թեքվում է դեպի ափունքը համբույրի երազանքով, մեխակի աչքերը ժպտում են մանկան աչուկների պես, վանքի ծառերն աղոթում են կամ բոսոր ժպիտները առաքում, ջրերը պարում են, լուսինը ծառերից ծաղկի պես է կախվում կամ լուսնի շողերը ասեղնագործում են քողքը մութի:

Տեղին է հիշել, որ Մեծարենցի ժամանակակից և հետագա շատ գրաքննադատներ Մեծարենցի քնարերգությունը համեմատել են իմպրեսիոնիստների ստեղծագործությոոնների հետ: Համեմատությունը տեղին է, սակայն կա մի շատ կարևոր, սահմանազատիչ, առանձնահատուկ տարբերություն Մեծարենցի և իմպրեսիոնիստների միջև: Ի տարբերություն վերջիններիս, որոնց ստեղծագործություններում բացակայում է պարզությունն ու հստակությունը, (դրանք ավելի շատ ներկայացնում են բնությունն ու առարկաները արտաքին գծերով ու մոտավոր)Մեծարենցի ստեղծագործություններում, չնայած հեղինակի ընկալման «զգացողությանը», բնության առարկաների պատկերները շատ հստակ են, ցայտուն, ունեն նաև ճանաչողական արժեք:

Այստեղ քերթողը հետևում է իր պաշտելի Նարեկացուն, որն ամենավերացական գաղափարներին անգամ տալիս է որոշակի ձև:

Բնությունը Մեծարենցի քնարերգության մեջ անշունչ, մեռած տարր չէ, այլ՝ կենդանի, բաբախուն, հարաշարժ ու բազմերանգ:

Գույնի ու լույսի նորագույն անցումներով են մարմնավորվում ու պատկերվում ծաղիկն ու ծառը, ջուրն ու զեփյուռը, որոնց հետ այնպես մտերմիկ ու հարազատորեն եղբայրանում է քնարական հերոսը:

Մեծարենցի ստեղծագործություններն ընթերցելիս, թվում է՝ լսում ես ծովի ալիքների ծփանքը, ծաղկաթերթիկների անլսելի շրշյունը, հովի շունչն ու շատրվանի ցայտերի կարկաչը:

Զգացվում է, թե որքան ծով ուշադրությամբ ու անհուն սիրով, դիտողականությամբ ու անհագ ծարավով է կապված եղել վաղամեռիկ բանաստեղծը բնության հետ: Պատահական չէ, որ նա այդքան շատ էր սիրում լինել բնության գրկում: Ինչպես վկայում են մտերիմներն ու ընկերները, բնության գրկում կատարած ամեն մի զբոսանք դառնում էր անմիջական տպավորություններից բխած մի ստեղծագործության ակունք: Շատ հատկանշական է ընկերոջ հուշը, որը պատմում է, թե հերթական զբոսանքներից մեկի ժամանակ Միսաքը թեքվում է

դեպի ճամփեզրին բուսած մի քնքուշ ծաղկի կողմը, մոտենում, հակվում նրա վրա, և որպես շատ բնական մի երևույթ, հարցնում. «Վայրի ծաղիկ, անունդ ի՞նչ է:» Իսկապես, ճշմարիտ բանաստեղծի ճշմարիտ բանաստեղծական արարք, որն էլ դարձավ հերթական բանաստեղծական բույլ-ծաղիկների քնքուշ ու նուրբ ծաղիկ-բանաստեղծություններից մեկը:

Մեծարենցի քնարերգությունն ու նրա պաշտած բնությունը արթնացնում են մարդու մեջ կենսական ուժեր, լավատեսական գաղափարներ, կենսատու արևի և հուսավառ գարնան երազանք:

Կախարդական այդ աշխարհում անկրկնելի հրապուրանքով են լցված այգն ու ցայգը, արևն ուվերջալույսը, միջօրեն ու մթնշաղը, օրվա բոլոր պահերը: Ընթերցողը նույնիսկ դժվարանում է որոշել, թե դրանցից որն է իր գեղարվեստական արտացոլման կատարելությամբ ավելի գրավիչ:

Բնության անսահման, կազդուրիչ սիրով լցված հեղինակը չի մոռանում բնության ստեղծագործ զավակին՝ մարդուն:

Այս առումով հրաշալի է «Ըլլայի, ըլլայի» շարքը: Հեղինակին հարազատ է դեռևս հայրենի Բինկյանից իրեն ծանոթ հայ գյուղն ու գյուղացին, «հողին հակված» բարի մշակը: Մեծարենցը փառաբանում է նրա բարի վաստակն ու արդարասիրությունը:

Վեր են հառնում հայրենի բնաշխարհի նման շռայլ շինականի հյուրասեր ոգին, դարերից եկող տոհմիկ ազնվականությունն ու առաքինությունը: Նա ցանկանում է անմնացորդ , անձնական մի սիրով նվիրվել բոլորին ՝ խեղճին, լքվածին, տնանկին, երազում է ճամփի վրա հյուղ լինել՝ մոլորվածին ապաստան տալու համար, հայոց դաշտերի առատ բարիքները հրամցնել նրան, հասկանալ, ամոքել ու սփոփել ուրիշի վիշտն ու տառապանքը:

Անգամ Աստծուն դիմելով՝ Մեծարենցը չի խնդրում ոչինչ իր անձի համար: «Տուր ինձի Տեր» բանաստեղծության մեջ քերթողը խնդրում է միայն ու միայն անանձնական ուրախություն՝ աշխատող ու տառապող մարդու, դժբախտի ու վիատվածի համար:

Սա հայ գրականության պատմության մեջ նարեկացիական վսեմագույն առաքինությամբ գծված ուղղություն է, որով քայլում է գրեթե պատանի բանաստեղծը: Սա երջանկության նորովի ըմբռնում ու հասկացողություն է, ուրիշին նվիրվելու հոգեկան բարձր վայելք:

Մեծարենցի ստեղծագործություններին բնորոշ է նաև մոտիվների շաղախումն ու միահյուսումը: Թերևս սա բացատրվում է հեղինակի՝ իր կարճատև կյանքի տևողության գիտակցումով: Չէ՞ որ նա ուներ շատ ասելիքներ և դրանք ու իր բազմատեսակ զգացմունքերը միանգամից արտահայտելու բուռն ու բնական պահանջ:

Այս առումով զարմանալի չէ, որ նրա բնապաշտական, հայրենասիրական, սիրո ու ցավի, անսահման մարդասիրության մոտիվները հաճախ միաձուլված են:
Սերը Մեծարենցի ստեղծագործություններում անբաժան է բնությունից: Սիրուհին ապրում է ու շնչում բնության հետ, նրան ձուլված: Այդ նույն բնությունից է իր ներշնչանքը ստանում բանաստեղծը:
Բնությունը շնչում է սիրով, ամեն ծառ ու թուփ, հով ու ալիք սիրով են լցված, սեր են շշնջում, և տիեզերքը ծովացած ՝ սիրո կարոտով:
Բլուրն ի վեր սափորն ուսին վերադարձող աղջկա հմայիչ պատկերը լրացվում է բնության անհասանելի, անմեկնաբանելի, առեղծվածային արարչությամբ: Արշալույսի հետ հրավառվում է լույսի ցոլքերով սափորի կարմիրը, որ բռնել է աղջիկը կակաչ ձեռքերով, արևի ոսկե մատները սողոսկում են աղջկա վարսերի մեջ թռչնի թևի նման մեղմ թևածում է նրա գլխաշորը, գեղանի աչքերը պսպղում են ծիածանի բույրով:
Պատանեկան հուզավառ, սիրատենչ սրտի բանաստեղծական անմիջականությամբ Մեծարենցը բացում է իր հոգու գաղտնիքները: Նրա, ինչպես իր հասակակից յուրաքանչյուր պատանու հոգում, ծագում և ահագնանում է գեղեցիկ, նուրբ աղջկա ուշադրությանն արժանանալու իղձ-երազանքը, անմար տենչը: Կարմիր սափորից երկու կաթիլ ջուրը կակաչ ձեռքից, և անանուն, գուցե նաև իրեն անհայտ սպասումներով դողում է քնարական հերոսուհին: Դողում է սոսին, որ ամենայն հավանականությամբ հենց աղջկա խորհրդանիշ պատկերն է:
Մեծարենցի կենսագրությանը քաջածանոթ ընթերցողը լավ կհասկանա, թե ինչու հեղինակի ստեղծագործությունների մեջ նրա հույզերի հերոսուհու՝ աղջկա պատկերը հաճախ աննյութական, երևակայությունից ծնված է, մարմնացած ցնորք կամ անուրջ, ռոմանտիկ իղձ ու երազ, որ ծնվել է ջրից ու փրփուրից, ծառ ու ծաղկի բուրումներից:
Ասես վերակենդանանում են Մեծարենցի ստեղծագործություններում հունական և հայկական դիցաբանության դիցանույշները, բնությունն ինքն էլ հրապուրիչ, գեղեցիկ տեսք է առնում, հանդերձավորվում և նազում ու պարում մեր պատմական կաքավողների պես՝ անդիմադրելի հրապույրով ու նազանքով:
Բանաստեղծի հույզերի տենչանք կույսն էլ հայտնվում է բուրումնահեղձ վարդերով, արևակեզ մարանքներով:
Սակայն անկատար սիրո ցնորքը իր հետ բերում է սիրո ցավ, խորհրդանիշ-պատկեր սիրո առուն զարկում է մերթ ծաղկավետ ափունքին, մերթ քարերին: Այդպես ջրերի նման վետվետում է անպատասխան սերը: Սակայն ինչ էլ որ լինի, անմար ու մշտավառ են բանաստեղծի հոգու կրակները:

Մեր առաջ հառնում է խորին թախիծով, կյանքի կարոտով ու տենչանքով լեցուն մեծարենցյան աշխարհը:
Սակայն մեծարենցյան թախիծն առանձնահատուկ է: Այն ընդգծվում է իր անսովոր մեծությամբ ու պայծառությամբ: Բնության նման Մեծարենցն ամենաներող է ու տոկուն: Զարմանալի է Մեծարենցի լավատեսությունը: Որքան խորն է սիրո կսկիծը, այնքան խորն է հավատը՝ առլեցուն լավատեսությամբ.
<<Բայց սիրո հույս մը կարևե հոգիս…>>

Ինչպես հայկական խորհրդապաշտության բոլոր նշանավոր ներկայացուցիչները, այդպես էլ Մեծարենցը առանձնահատկությամբ ու պատասխանատվությամբ է մշակել հայ բանաստեղծական լեզուն:
Նա ստեղծել է արտահայտչական գեղարվեստական հարուստ միջոցներ՝ զգացմունքի նրբագույն, վետվետուն երանգներ, սովորական աչքի համար անորսալի շարժումներ՝ իր ակնթարթային տպավորությունները գեղարվեստական պատկերների վերածելու համար:
Նրա «բառային նկարչության» գեղարվեստական հնարով ստեղծած, «նկարած» գիշերները պարզ են, լուսածածան, հրաշալի: Տեսանելի են կապույտի մեջ պեղվող լույսի ծիրանի ակոսները, ծառերից ծաղիկների պես կախված լուսնի ցոլքերը, տեսնում ենք մթնշաղը սատափե, մանուշակագույն մշուշը , շոգոլքներ ոսկեման, շափյուղազարդ ցայգանդորրը և այլն:
Նուրբ ու հարուստ այդ երանգապնակը, գունային գամման արտահայտում են հույզերով լեցուն պատանի բանաստեղծի ապրումների անսովոր հարստությունը:
Մեծարենցյան աշխարհի գունագեղությունը դառնում է հույզ և ապրում:
Չնայած տաղանդաշատ բանաստեղծը կյանքից ու գրական ասպարեզից հեռացավ իր տաղանդի փթթուն շրջանում, սակայն իր երգը հասցեագրեց հավերժին ու նոր լուսեղեն ուղի բացեց հետագա գրական սերունդների համար:
Բառի, նրա պատկերավորման հնարավորությունների մասին ինքը՝ հանճարեղ Մեծարենցը, իր արձակ բանաստեղծություններից մեկում գրում է.
«Ես կը մնամ սակայն սոսիին տակ, անշարժ, այս իրիկնային համերգության մեջ, մեկնող արևին ոսկի գիրը, հեռավոր ծփուն կապույտ տառը, տերևներուն, թռչուններուն թրթռուն վանկը կը հեգեմ: Բայց չգտա դեռ անսահման բառը, որ դյութական բալլիքի պես պիտի բանար ինծի այս փակ դուռները՝ ճամփաներուն վրա, ծառերուն տակ, ամբոխին մեջ, անցորդները՝ ամենն էլ՝ աներևութացան, ես տակավին մթնշաղի մեջ կսպասեմ: Ու, ըսեք, ըսե՛ք ինծի գունագեղ անսահման բառը այս իրիկուն…»

Մեծարենցի կիրառած պատկերավորության բազմազան միջոցները համապատասխանում են քնարական հերոսի բնավորությանը և արտահայտում են նրա բարդ, հարուստ, երբեմն էլ հակասական ներաշխարհը :Իսկ նրա քնաներգության մեջ արտահայտված զգացմունքներն աչքի են ընկնում արտակարգ նրբությամբ, անկեղծությամբ ու խորությամբ. նրանք մեղմ են, արտաքուստ հանդարտ, բայց և ներքուստ լարված, դրամատիկ և բուռն: Արտաքին աշխարհի, բնության յուրաքանչյուր երևույթ նրա կողմից ընկալվում է ամենից առաջ իր զգացմունքային բովանդակության տեսակետից և դառնում է հորդ ու անկաշկանդ հույզերի աղբյուր:

Մեծարենցի ուշադիր ընթերցողը կարող է նկատել, որ զգայուն բանաստեղծը պատկերավորության բազմազան միջոցներից երևի թե առավել հաճախ օգտագործել է փոխաբերությունը: Բառերն ու արտահատությունները գործածել է ոչ թէ իրենց սովորական, այլ անուղղակի, փոխաբերական իմաստով:

Փոխաբերությունների առատությունը, որն այնքան ակնառու է Մեծարենցի և՛ չափածո, և՛ արձակ երկերում, անշուշտ, ունեն իր դրական ակունքները: Դրանցից ամենից կարևորներն ու նշանակալիցները հին և միջնադարյան հայ բանաստեղծությունն է, և առանձնապես Նարեկացու ստեղծագործությունը: Մեծ է նաև խորհրդապաշտական քնարերգության ազդեցությունն ու դերը Մեծարենցի լեզվական սկզբունքների ձևավորման մեջ: Ահա, թե ինչ է գրում Մեծարենցն այս վերջին հանգամանքի մասին. «Փոխաբերությանց ու նմանությանց ուգնություններ ու նորություններ ՝ զորս կը սիրեմ գործածել՝ կարծել տվին, թե սեմպոլիստ մ'եմ , բայց ադոնցմով կը հիշեցնենք միայն սեմպոլիսմը՝ որուն բոլորանվեր ուխտադիր մը չ'ըլլալե զատ՝ հակընդդեմ բնութենապաշտ հակումներ ալ ունիմ անոր հանդեպ»:

Փոխաբերությունները սովորաբար դասակարգվում են ըստ նրա, թե ինչ խոսքի մասից են նրանք կազմվում. գոյականից՝ լուսե արցունք, արև ծիծաղի, ծաղիկ ծամերու, սիրտս բոց մը, լույսի անձրև, բադիլներու մեղեդին, մոմերու, ճամփաներեն իմ մտքին, թելն անուրջիս.ածականից՝ ըղձանուտ երազիս ափունքեն, հոգեսարս դողերով, ծիրանի այն դաղձին, խանդոտ երազի, նավակները դյուրավառ, մթնշաղին մեջ անհետ, խմբերգն արծաթի, անձրև արծաթի, կապույտ հակումներ, ցնորոտ անդորրություններ, սատափե մթնշաղ, ապրելումե երազ, կապույտ մութի աշխարհ, բայից՝ մեներգն անվերջ կվազի, ծառերուն վրա թռչուններու խմբերգն հիմա կանձրևեմ:

Փոխաբերության հատկապես բայից կազմված արմատները գալիս են դեռևս հնադարից, երբ հնագույն մարդկանց մտածողության մեջ բնության երևույթները շնչավորվում էին, ստանում մարդկային գծեր:

Մեծարենցի համար փոխաբերությունը ամենակարճ ուղին է՝ արտահայտելու իր բանաստեղծական մտածողության յուրահատկությունը:

Լեզվի պատկերավորման միջոցները գրողին օգնում են, որ նա հասնի պատկերման ավելի մեծ կոնկրետության և կենդանության, նկարագրվող երևույթի ավելի բազմակողմանի բացահայտման, խոսքի գեր-գեղարվեստական հեղեղության, զգացմունքայնության:

Պատկերավոր արտահայտությունները շատ են հանդիպում և առօրյա, աշխույժ խոսակցական լեզվում, դրանց կարելի է հանդիպել նաև հրապարախոսական, գիտական արտահայտությունների մեջ: Սակայն դրանք առավել շատ չափով գործածվում են գեղարվեստական լեզվում՝ հանդիսանալով գրողի պատկերավոր մտածողության անմիջական արդյունք և դրսևորում: Հենց դրանց միջոցով էլ գրողը իրականացնում է իր լեզվական պատկերների ստեղծումը:

Գեղարվեստական պատկերավորության միջոցներից (համեմատություն, մակդիր, շրջանառություն, չափազանցություն, գրոտեսկ, այլաբանություն և այլն) է փոխաբերությունը, որը գեղարվեստական պատկերավորության միջոցներից այլաբանության տեսակներից մեկն է:

Ընդհանրապես բառի գործածությունը ոչ ուղղակի իմաստով կոչվում է այլաբանություն:

Այլաբանությունը իմաստային բարդ երևույթ է: Դա գրական այն հնարն է, երբ մի բառը փոխարինվում է մի ուրիշ բառով՝ նրանց իմաստների նմանության կամ առնչության հիման վրա:

Այլաբանական բառը բացի իր հիմնական նշանակությունից, տվյալ բառակապակցության մեջ ձեռք է բերում մի նոր իմաստ (այն բառի իմաստը, որին փոխարինում է): Այլաբանությունները լայն տարածում ունեն հատկապես խոսակցական լեզվում: Դեռևս հնուց այլաբերության սահմանները տարածվում և ընդարձակվում էին՝ ընդգրկելով իրենց մեջ գրեթե պատկերավորության բոլոր միջոցները: Ըստ արդի գրականության ավելի կոնկրետ իմաստով այլաբերությունը երկու հիմնական տեսակ ունի՝ փոխաբերություն և փոխանունություն:

Այն այլաբանական բառերը, որոնք հենվում են երկու երևույթների նմանության վրա, կոչվում են փոխաբերություն: Օրինակ՝ Մեծարենցի «աստղերը լուռ կը հալին» փոխաբերության մեջ գրողը սուբյեկտիվորեն նմանություն է տեսնում լուսածագին, լույսը բացվելու հետ աստղերի աստիճանաբար աղոտանալու, ցերեկվա լույսի ազդեցությամբ մարել-անհետանալու և հալվելու միջև և կը հալին

ասելով նկատի ունի հենց աստղերի մարել- անհետանալը: Ի տարբերություն համեմատության, որը նույնպես նմանության վրա է հիմնվում, փոխաբերության դեպքում համեմատվող անդամը բացակայում է՝ փոխարինվելով այլաբանական իմաստ ստացած բառով:

<<Թող հոգվույս մեջեն անցնին կարգավ մանուկներն ընդարմացած, հոս մանուկ զգացումներուն, տենչերուն, հույսերուն, բաղձանքներուն, որոնք երկար ատեն ընդարմացած՝ արևին կենսաբաշխ ճառագայթներուն պետք ունին վերսթափվելու համար...

Ու երազներուս ականակիթ հետզհետե կը թափին, արծաթ շողերն երազի, ափունքն երազի, երազ մը բուրյան, կօծե հոգին իր շողուն լուսացնցուղ երազով, իմ համբույրիս բոց ու բուրյան վարդերով, համբույրն իր դալար, զգացում մը բյուրեղե, ծաղիկն սփոփանքին, հոգիիս մեջ ինկան խայտանքի նոր թիթեռներ, մութ հոգիի ճրագներուն ցրտահար, սիրացոլ նայվածքներու ողկույզ, ճամփաներեն իմ մտքին, մտածումը կդեգերե ուղեմոլար, կը մեկնին իմ անրջանքին թիթեռները ամեն, տենչանքները, տարագնացիկ մեղուներ, հոգիիս սպիտակ աղավնին, հոգվույս լուսոռոգ պատուհանները, արծաթ թելերն ընձանքներուդ, թելն ընձանքիս, թելն անուրջիս…>>

Բնության երևույթներ, առարկաներ պատկերող փոխաբերություններ.

Մելամաղձիկ մառախուղներ, խոնջ իրիկուն, պատուհանեն կխրկե ինձ հովիկն համբույրն իր մտերիմ, դաշտերուն մեջ հարսնուկներու բոսոր իղձեր կը ցամքեն, լուսե արցունք մոմերու, որոնք հանդարտ կմաղին, ըմպած մռայլն ամպերուն, տխուր է ծովն աշունի, գիշերվան անտես ձեռքեր, լույսի ծաղիկ թրթռուն, լույսի ծփուն ծաղիկ, ճերմակ մշուշ, հայելիներու հոգին պրիսմակ կը դողա համակ, արծաթ լույսերն հիմա տակավ կը ծաղկին, ձյունի ցնծություն, աստղերը լուռ կը հալին, ոսկի արշալույսին կուսությունը:

Երբեմն Մեծարենցը իր բանաստեղծությունը կառուցել է փոխաբերական շարքերի հիման վրա: Այլ կերպ ասած՝ մեծարենցյան բանաստեղծություններից մի քանիսը իրենք են դառնում ծավալուն փոխաբերություն:

Դրանցից են՝ «Նավակները», «Մեղուները», «Հովը», «Իղձեր» և «Ուռենիներու շուքին տակ», «Կապույտ հածումներ», «Մեռելոց» և այլն:

Մեծարենցի փոխաբերությունների շարքում զգալի տեղ են գրավում նույնիսկ իմաստով անհամատեղելի, հականիշ իմաստներ ունեցող բառերի զուգակցումով կամ իրար բացառող, իրար հետ չհամընկնող երևույթների կապակցումով ստեղծված փոխաբերությունները: Դրանց միջոցով բանաստեղծը հասնում է

հուզական բովանդակությունն առավել արտահատիչ, ակնառու դարձնելու ոճական հնարքի: Նրա տաղերում կողք-կողքի հանդես են գալիս գութն ու անխղճությունը, լացն ու ժպիտը, բույրն ու հևքը, ոտնաձայնն ու լռությունը:
«Խենթ է, կըսեն անխիղճ գութով», «Հյուղն աներազ, կուլա ժպիտ մը դաժան», «Անրջածափ, նվաղ բույրերն երերուն վերջալույսին մեջ ոսկեզօծ կհևան», «Քայլերուն, որ լուռն ուժգնորեն կը շեշտեն»: Նմանատիպ փոխաբերություններից են հեղուկ նվագ, փափուկ զովություն, լուսե աչքեր, որ կը խոկան, հոգուս նվագը լուսե, հուշքերուս ծափքը խայտակ:
Մեծարենցը նաև բնության գույների ու ձայների անորսալի հնչյուններն ու երանգները ընկալող և դրանք վերարտադրող փոխաբերությունների ստեղծման վարպետ է: Պատահական չէ, որ այս առումով հայ նշանավոր գրականագետ Էդվարդ Զրբաշյանը նրան համարում է «Թերևս ամրցելի հայ նոր քնարերգության մեջ: Ամեն մի փոքր, նույնիսկ անորսալի կամ գունային երանգ նա կարող է վերածել բանաստեղծական պատկերի: Սակայն ավելի կարևոր է այն, որ գունային պատկերները ևս ոչ այնքան ուղղակի առարկայական իմաստ ունեն, որքան ծառայում են ոrևէ վերացական հասկացության կամ գաղափար կոնկրետացնելու, օժտելու այն երանգով, որը հատուկ է բնության տվյալ տեսարանին կամ պահին»:
Նմանօրինակ փոխաբերություններից են՝ կապույտ հածում, կապույտ իղձեր, հեշտություն մը կապույտի, կապույտ բարություն, ճերմակ երազ, ճերմակ իղձ, ճերմակ գաղափար, ճերմակ, ձյունեղեն դյութանք (ճերմակ վարդերի ներշնչած պատկերացումներ), կարմիր կարոտ, բոսոր ժպիտներ, բոսոր իղձեր, բոցեղ տրտմություն, տենչանքի ծիրանիեն հրաշեկ հոգիիս, ծիրանի ճրագները իղձիս:

Գույնի և նվագի համադրումով են ստեղծված հետևյալ պատկերավոր ձևակերպումները՝ հեղուկ նվագն հուշիկ կկաթե, գորովակաթ արցունքը ձեր արծաթե, տրտմանույշ կայլակներ, արտասուքնիդ շիթ-շիթ հոգիս կարծաթե, քաղցր է ինծի զեղումն այդ ձեր թախծանքին, մինչ բուրմունքիդ իմ հոգվույս մեծ կամպանա:

Հետքրքիր ու վառ պատկերներ են ստեղծում և փոխաբերությունների հետևյալ օրինակները. ինչ հեշտին է մթնշաղն այս սատափե, անծիր ցայգ, բուրմունքներու հաշիշ, խոնջ իրիկուն, գիշերներու գինին խավարածո, անջրածափ, նվազ բույրերն երերուն, հեշտ փայլփլուն գինիներու անդորրություն մի ցնորական, սիրո հուշեր լուսավետ՝ ծիրանեծին բույն, ցավոտ սիրո հարված, խավարը տառապագին, կուզե մշուշն այս օրերուն, այգն է ծաղիկ երազով լի, քեզի համար տենդով հյուսած երազանքներս, ծաղիկ նայվածք, ձյուն-լույս, համպարի ու մուշկի բուրյան շոգիներով, երփնազօծված հուշեր, երգի քուղ, առվի հեղուկ իրան, երազի մանուկ

բույրեր, հովերի շուրթեր, ցավը լույսի, երգը իղձի և հառաչի թել մըն է հիր, քարի վրա կ'ընկնե հոտաղի ձայնը, ծորակին՝ հովի համբույրը:

«Ասուպի մը նմանեցավ, հանկարծադեպ երևում մը, լուսաշող ակոսում մը, հետո՝ ընկլուզումը մեծ գիշերին մեջ: Շուտով պիտի շրջաներ. այդ էր պատճառն իր արտասովոր փայլին: Հերու ողջունեցինք իր երևումը, այս տարի՝ իր անհետացումը կսգանք»,- այսպես է գրում ժամանակակիցը Մեծարենցի մահվան առթիվ:

Մեծարենցի կարճատև կյանքը ի զորու չէր նսեմացնելու նրա գրական փառքն ու հիշատակը: Նա իրենից հետո թողել է անչափ մեղմ, քնքուշ ու ինքատիպ, գեղարվեստական անկրկնելի հարուստ ու գեղեցիկ պատկերներով լեցուն աշխարհ, որը հայ գրականության մնայուն արժեքներից է: Մեծ էր Մեծարենցի ազդեցությունը իր ժամանակակից և հետագա բանաստեղծների վրա: Ինչպես պատմել է Վահան Թոթովենցը, որը նույնպես Խարբերդ նահանգից էր, «Մեծարենցը գավառական պատանեկության պաշտամունքի առարկա էր»:

Հետագայում լույս տեսած իր բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն նա նվիրել է Մեծարենցի հիշատակին: Հետաքրքիր է, որ նա այդ գիրքը հրատարակել էր տվել այն նույն գույնի և որակի թղթի վրա, որով տպագրվել էր Մեծարենցի առաջին գրքույկը:

Վաղ շրջանի, Չարենցի ստեղծագործական աշխարհի և բանաստեղծի կայանալու վրա հայ բանաստեղծներից ամենից ազդեցիկը եղել է Մեծարենցը՝ Տերյանի հետ միասին: Չարենցն էլ իր հարգանքի տուրքը վաղամեռիկ բանաստեղծի հիշատակի առաջ արտահայտեց նրանով, որ 1917 թ-ին հրատարակած բանաստեղծությունների ժողովածուն կոչեց «Ծիածան», ինչպես անվանվել էր Մեծարենցի՝ դրանից տասը տարի առաջ լույս տեսած առաջին գիրքը: Ի վերջո, հանրահայտ է Մեծարենցի մասին Չարենցի գրած նշանավոր քառատողը ՝ «Արյուն է եղել…»:

Իսկ Մեծն Թումանյանի գնահատման քառատողում Չարենցը կողմնակիորեն անգամ նշում և գնահատում է իր սիրած բանաստեղծին՝ «կա Մեծարենց, կա Տերյան…»: Մեծարենցյան բանաստեղծական «սաներն» են եղել նաև Գուրգեն Մահարին, Վաղարշակ Նորենցը, Վահրամ Ալազանն ու Վահագն Դավթյանը և ժամանակակից շատ գրողներ:

Բնությունը և գյուղի պատկերները Մեծարենցի ստեղծագործություններում:

Բանաստեղծը սիրում է զբաղվել օրվա տարբեր պահերի նկարագրությամբ. նկատի ունենալով մի շարք բանաստեղծությունների ամբողջությունը, կարելի է ասել, որ Մեծարենցի քնարական հերոսը մի յուրօրինակ ճանապարհորդություն է կատարում օրվա միջով՝ մթնշաղից մինչև կեսգիշեր ու ցայգալույս, առավոտվա արևի առաջին շողերից մինչև արևախանձ ցերեկվա «տապի նոպաները»: Եվ օրվա ամեն մի պահ նկարագրված է իր բնորոշ գույներով ու բանաստեղծի հոգում ծնած տրամադրություններով: Մեծարենցի բանստեղծություններում հատկապես շատ են գիշերային պատկերները: «Ծիածան» ժողովածուի 38 բանաստեղծություններից ավելի քան 20-ը կապված է գիշերային տեսարանների հետ: Այնտեղ շատ ցայտուն է երևում բանաստեղծական պատկերների հասարակական ենթիմաստը: Իրոք. ինչու՞ է բանաստեղծն այդքան հաճախ խորասուզվում գիշերային մթության մեջ: Մեծարենցը շատ խորն է ապրում պոեզիայի հավերժական մոտիվներից մեկը՝ գեղեցիկ երազանքի և շրջապատի իրականության հակադրությունը: Եվ նա որոնում է այն մաքուր հանգրվանը, ուր կարող են պահպանել իր տենչերը, ապրել նրանց տևական հմայքով: Այդ հանգրվանը գիշերվա լռությունն է, երբ կյանքի անհրապույր պատկերները մի պահ մոռացվում են, և բանաստեղծը հանձնվում է սիրո և անդորրության երազներին: «Գիշերին մեջ չէ՞ ապաքեն, որ երազները ավելի վառ ու արագ զերթնումներ կունենան. գիշերին մեջ, ուր շրջանկարը այնքա՛ն հմայիչ կըլլա, և սպասումը՝ այնքա՛ն քաղցրորեն տաժանագին»,-գրել է բանաստեղծը: Հետևաբար, նա դիմում է գիշերվա պատկերներին ոչ թե հավատով պարուրվելու և ննջելու, այլ տենչերի հմայքն ու սպասումների քարցրությունը ավելի լրիվ զգալու, «հիվանդ հոգին անդորրով պատմուճանելու» համար: Գիշերը Մեծարենցի համար մի անսահման «ցնորոտ անդորրություն» է, երբ դադարել, լռել են ցերեկվա բոլոր ժխորային ձայները, և բանաստեղծի՝ երազներով լեցուն հոգին կարող է անկաշկանդ ճախրել եթերային կապույտում՝ հասնելով մինչև «ադամանդ աշխարհներու» ցանկալի դռները:

Այդ տրամաբանությունների բացահայտման առումով հիրավի դասական գործ է «Ձմռան պարզ գիշեր» բանաստեղծությունը, որով բացվում է «Ծիածան» ժողովածուն: Բնապաշտ ու սիրատենչ, երազներով ու իղձերով լեցուն անհատը և գիշերային բնությունն իր անսահմանությամբ, իր խորհրավոր ու կախարդիչ ձայներով և գույներով- այս է բանաստեղծության հիմքում դրված «քնարական իրադրությունը»: Դա մի հիմն-մենախոսություն է՝ ձոնված «ցնորաբեր գիշերվան»: Բացված պատուհանից գիշերը ներս է խուժել իր «լույսի տարփանքով» ու «զով

շողերու թաց կախարդանքով», և բանաստեղծն իր համբույրն է հղում անպատմելի հմայքներ պարգևող գիշերվա անսահմանությանը.

Պարզ, լուսածածան հրաշալի՜ գիշեր,
Հոսե՛սրտիս մեջ դյութանքիդ ալիք.
Ճերմակ երազիդ ցայտքերեն մեղմիկ
Պուտ-պուտ կաթեցու՛ր հոգվույս սիրազեր:

Գիշերը սիրելի է բանաստեղծի համար, որովհետև նրա անհունության մեջ կարող են դադարել ցերեկվա «ձայները պատիր», և նույնիսկ կարող են մեռնել «տիվ ու ժամանակ»: Գիշերը ինքնամոռացման, հոգևոր սրբածության մի պահ է, երբ քնարական հերոսը ձուլվում է մեծ բնությանը, դառնում նրա իմաստուն հոգու մի մասնիկը.

Ցնորաբե՜ր գիշեր, ա՜հ ընդունե՜ զիս,
Ընդունե՜, միստիկ ո՜վ անդորրություն,
Իմ աղերսակոծ շունչիս սոսավյուն,
Եվ համբույրն անանց՝ զոր կուտա հոգիս:

Այսպես, գիշերային տեսարանների պաշտամունքը ուղղակի կապվում է լիարժեք կյանքի և սիրո կարոտի հետ, որը բանաստեղծի կենսազգացողության հիմանական գծերից է: Սակայն «ցնծագին գիշերվա» պատկերը միաձուլվում է մոտեցող մահվան ողբերգական սպասման և սիրո անհնարինության գիտակցության հետ («Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կը մաշի, շրթունքս են ծարավ միակ համբույրին...»), և բանաստեղծության ամբողջությունից մեզ է փոխանցվում բարդ-համադրական, իր բովանդակությամբ խորապես դրամատիկ մի ապրում-պատկեր:

Մեծարենցի բանաստեղծություններում գիշերվա պատկերը հաճախ է միաձուլվում ըղձալի էակի դիմանկարի անորոշ ուրվագծումներին, դառնում սիրո անհագ ծարավի արտահայտման միջոց. գիշերվա մեջ բանաստեղծը որոնում է այն, ինչ չի կարող գտնել իրական կյանքում, և դա ուղղակի արտահայտությունն է այն խոր հիասթափության և դժգոհության, որ ապրում է բանաստեղծը մռայլ իրականության մեջ: Ստեղծելով գիշերային ամփոփիչ տեսարաններ՝ նա ասես ձգտում է գեթ երազանքի ոլորտում հաղթահարել շրջապատի դաժան, գորշ ու անհրապույր կյանքը, որը նա իր վաղ շրջանի բանաստեղծություններից մեկում («Քուն») համեմատել է «էջ առ էջ լացող» գրքի հետ:

Եվ զարմանալի չէ, որ Մեծարենցի «գիշերային» բանաստեղծություններում ամենից շատ խոսվում է լույսի աղբյուրներ որոնելու մասին. բանաստեղծի համար

գիշերային «մութի տակ լոկ նինջ մը կա լուսանվեր», և փարվելով գիշերվան, նա չի ուզում թաղվել ու մոռացվել անանց խավարում, այլ տենդոտ, անհանգիստ հայացքով փնտրում է շողի ու լույսի շատրվաններ, որոնք մարմնավորում են կյանքի և կենսասիրության գաղափարը: «Ես կսպասեմ հորդ ու վճիտ լույսերուն, որոնց բույրը պիտի ցոլա անծիր ցայգուն մեջ հոգվույս»,- գրում է նա «Երազի պահեր» բանաստեղծության մեջ: Իրոք, նա հատկապես սիրում է պատկերել ցայգալուսային պահը, երբ առաջին ցոլքերն սկսում են պատռել մութի անթափանց քողը, և այգաբացն արդեն մոտ է:

Մեծարենցի պոեզիայում հասարակական և գեղագիտական կարևորագույն նշանակություն է ձեռք բերում բնության պատկերումը: Առանց չափազանցման կարելի է ասել, որ հայ գրականության ոչ մի ուրիշ բանաստեղծի գեղարվեստական համակարգում բնությունն այնքան մեծ տեղ չի գրավում, ինչպես Մեծարենցի մոտ, և ոչ մի բանաստեղծ, բացի Թումանյանից, բնության հետ կապված այնպիսի խոր և ինքնատիպ տեսություն չի զարգացրել, ինչպես Մեծարենցը:

Իբրև քնարերգու՝ Մեծարենցն ունի այն ցայտուն յուրահատկությունը, որ մարդկային ապրումները գրեթե միշտ պատկերում և բացահայտում է բնության հետ սերտորեն զուգակցված. նրանք կամ ուղղակի միահյուսվում են, և կամ, բնության տեսարանը հիմք է դառնում որևէ զգացմունք արծարծելու համար: Դա խորապես գիտակցված սկզբունքի արտահայտություն էր, Մեծարենցը պաշտպանում էր այն տեսակետը, որ չի կարելի զգացմունքները «երաշտ անապատներու մեջ տարագրել», որ միշտ ելակետ պետք է ունենալ «Մարդուն և բնության անմիջական հաղորդությունը», այն իրական կապերը, որոնցով մարդն առնչվում է բնության հետ, դառնում նրա մի մասնիկը: Հետևելով այդ սկզբունքին՝նա ստեղծել է բնության անհամար պատկերներ, որոնք միշտ մարդկայնացված են, տոգորված կենդանի ապրումով և հույզով: Նա կարողանում է գեղեցկություն և իմաստ տեսնել բնության ամեն մի անկյունում, յուրաքանչյուր տերևի, թփի, նույնիսկ չնչին թվացող շարժման մեջ, և այդ բոլորի միջոցով արտահայտել մարդկային ներաշխարհի և՛ ամենափոքր, արտաքուստ աննկատելի, և՛ ամենամեծ ու խոր հույզերը: «Բնության գրքում» նրա համար ոչ մի գաղտնիք չկա, նրան ծանոթ ու հարազատ է ամեն մի ձայն ու գույն, ամեն մի շարժում, որոնցից նա զարմանալի վարպետությամբ ստեղծում է մեկը մյուսից թարմ ու նուրբ, ինքնատիպ պատկերներ, համեմատություններ ու փոխաբերություններ: Ահա «Իրիկունս» բանաստեղծությունը: Այստեղ նկարագրվում է իրիկնային պահը, երբ արևն իր վերջին ճառագայթներով

ոսկևորում է ծառերի ճյուղերն ու տերևները, իր «մատիկներով» թափանցում նրանց ամենափոքր անցքերն անգամ.

Ծառոց ետին ճաճանչավուխտ պաստառ մըն է արևն ոսկի,
Ուր ծաղկածին ուղեղներու ճամուկ հյուսքը կսողոսկի:

Ապա հետևում են նոր պատկերներ. իրիկնային զեփյուռն իր կայտառ համբույրով բանաստեղծին թվում է վերադարձած մանկություն. ջրի ցայտերը՝ բարեկամի մտերմասաց փսփսուք, ցայտեր, որ լաչակների նման փռվում են նարգիսների գլխին կամ դառնում արտասուք ծաղիկների աչքերում: Իսկ բանաստեղծի ափերին ընկնող տերևները նրան թվում են անտես ոգու կողմից ուղարկված մի շնորհ:

Մեծարենցը կարողանում է բնության ձայները, բույրերն ու գույները ընկալել և պատկերել բնական համադրության մեջ: Կարելի է ասել, որ նրա բանաստեղծություններում բնության ձայներն ու շարժումները գույն ու բույր ունեն, իսկ գույներն իրենց հերթին հնչում են ու շարժվում: Ահա այդպիսի բանաստեղծական շատ պատկերներից մի քանիսը. «աղբյուրներուն կելլե խմբերգն արծաթի», «կապույտ հածում», «հեշտություն մը կապույտի», «փափուկ արծաթի շավիղ մը ձայնի», «ու կերկարի լուսարծաթ ժապավենն այդ բարբառին, «սև կիրնչե հուշքերու ծափը, խայտակ», «հոգվույս նվագը լույսե» և այլն:

Մեծարենցի բանաստեղծական պատկերը գեղանկարչության պես տեսանելի ու շոշոփելի է. Օրինակ՝. «Այգերգ» բանաստեղծությունը կարծես կենդանագրում է Եփրատի ափերին բարձր լեռների ու խոր կիրճերի մեջ փռված Բինկյան գյուղը՝ մթնշաղին գետափ գնացող եղնիկներ ու լեռնային արահետով անցնող ուղտի քարավաններ, որոնց բոժոժների միալար տխուր երգը խառնվում է վանքի զանգակների ձայնին: Մեր առջև փռվում է մի ամբողջ լեռնային բնանկար.

Կիրճին խորը, ժայռին ծոցն է գյուղանըկարը փռված,
Տարտամորեն, հսկայական, արծիվի մը ձևերով,
Մագիլները խորասուզած խորշերու մեջ մըթամած:

Բնության ի՛նչ անկյուն և ի՛նչ պահ էլ որ պատկերում է Մեծարենցը, նա գերադասում է ոչ թե բուռն, ալեկոծ, կոնտրաստային, այլ խաղաղ, անդորր, ներդաշնակ տեսարանները, որոնք սփոփում են բանաստեղծի հոգին, օրորում սիրելի եզերքի, բաղձալի կյանքի երազներով:

Թեև դժվար է Մեծարենցի կերտած բնության տեսարանների մեջ նախընտրությունը տալ մեկին կամ մյուսին, բայց, թվում է, «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծությունը մեկն է այն գործերից, որոնք ավելի լրիվ ու վառ կերպով են արտահայտում բնության մեծարենցյան ընկալման ու պատկերման առանձնահատկությունները: Իր այս բանաստեղծությունը Մեծարենցը դասել է

«զուտ նկարագրական ոտանավորների» շարքը, որոնց մեջ ուղղակի չի խոսվում մարդկային հույզերի մասին, այլ սկզբից մինչև վերջ նկարագրվում են բնության իրերն ու շարժումները: Բայց այդ նկարագրությունն ամբողջովին ներծծված է զգացմունքով, ամեն ինչ դիտված է բնության ամենափոքր մանրամասների մեջ թափանցող մարդկային հայացքով.

Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
Բուրումներով օծուն հովիկն իրիկվան,
Հոգիներուն կ'իջնե երազ մը բուրյան,
Ի՜նչ հեշտին է մըթնշաղն այս սատափե:

Այս բանաստեղծության հանդարտ տողերում ընդգրկված և պատկերված են բնության ամենանուրբ շարժումները, ամենամեղմ շշուկներն ու ձայները, ամենագեղեցիկ գույներն ու բույրերը:

Իրիկնային հուշիկ զեփյուռը, որն օժտված է հեռու դաշտերի բույրով ու մեկ առ մեկ վայր է թափում երփներանգ ծաղիկների թերթերը, ցերեկվա լույսով ու ջերմությամբ արբած աքասիաներից ձյունի նման ներքև իջնող ծաղիկները, ավազանի մեջ արտացոլվող նրանց լույսն ու արծաթյա վարսերը և, վերջապես, շատրվանի անընդհատ ցայտող ծաղկանման կաթիլները, որոնք մանկան վճիտ արտասուքի նման հստակ են ու թափանցիկ:

Սակայն բնությունը Մեծարենցի համար ոչ միայն նկարագրության առարկա է, այլ նաև գեղագիտական աղբյուր: Բայց ամենից հատկանշականը բնության ներքնապես հատուկ անհուն կենսասիրության, արևի ու կյանքի անսահման տենչանքի պատկերումն է: Բանաստեղծը ամենուր տեսնում է կենդանության և լույսի մի անդիմադրելի ձգտում, որը հատուկ է բնության բոլոր իրերին և որի շնորհիվ նրանք մարդկայնանում, շնչավորվում են, դառնում են բանական ու զգացող: Բնորոշ է, օրինակ, «Տերևները կըսեին...» բանաստեղծությունը, ուր արեգակին ձոնված ջերմ, կրքոտ կոչերը ոչ թե թռչում են մարդու շուրթերից, այլ վերագրված են լույսի ու ջերմության կարոտով տոչորված տերևներին: Այդ կոչերը՝ «արև՛, մե՛զ ալ ոսկեզօծե», «արև՛ մե՛զ ալ գգվե մոտեն», «արև՛ մե՛զ ալ ողջագուրե» հեղում են այնպիսի ուժով ու կրքոտությամբ, որ մի պահ թվում է, թե ինքը՝ կենսատենչ բանաստեղծն է բացականչում՝ «շողա՛, շողա՛, բարի արև, հիվա՛նդ եմ»:

Բնության պաշտամունքը, նրա ամեն մի երևույթի մեջ կյանքի բանական ձգտում տեսնելու գաղափարն առավել ցայտուն արտահայտվել է «Ի՜նչ արբեցությամբ» բանաստեղծության մեջ, որը Մեծարենցի պանթեիզմի ամենալրիվ մարմնավորումն է: Բնության բազմաթիվ պատկերները, որոնք այստեղ դիտված ու

պատկերված են բացառիկ նրբությամբ, ծառայում են մեկ ընդհանուր մտքի՝ ամեն ինչ տոգորված է կյանքի տենչով ու ծարավով, ամեն ինչ ձգտում է կենդանության ու կատարելության, համաչափության ու գեղեցկության: Դա մի ընդհանուր արբեցություն է, որով համակված են բոլոր մեծ ու փոքր իրերը՝ ծառերն ու ծաղիկները, թիթեռնիկն ու մեղուն, ծովերը, գետերն ու աղբյուրները: Բնության այդ ընդհանուր արբեցության պատկերը Մեծարենցը հասցնում է պանթեիստական այն միտումին, թե բնության բոլոր տարրերը ներարկված են Աստծով, անդրադարձնում են նրա էությունը.

Ի՜նչ արբեցությամբ հոգին կընդգրկե
Ալյակն հորդահոս ծայրիի բույրին,
Ծաթրին, անանուխ, վայրի ռեհանի
Բազմաբուրումներն ըտաշխ ու խունկե:
Ի՞նչ արբեցությամբ կընդգրկե անի
Բոլոր ձևերն ու երանգներն ամեն,
Բոլոր գոյությանց, բոլոր տարրերուն
Իր մեջ անդրադարձ ծիածանում են՝
Աստվածն ՝ որ եկավ՝ չե՜ս գիտեր ուրկե՜…

«Ծիածան» ժողովածուի տպագրությունից մի քանի ամիս անց Մեծարենցը գրում էր. «Գյուղի տեսարանները մի մեծագույն ներշնչաբանս կը կազմեն. որքա՜ն կը ցավիմ, որ էապես իրենց զավակը չեմ իմ բանաստեղծության մեջ. այն ատեն ավելի ինքնատիպ ու ապրող կըլլայի: Անշիջանելի բաղձանքս եղավ վերստին տեսնել ու ապրիլ գյուղիս ծոցը՝ նորոգվիլ իր տեսարաններուն ու գեղեցկությանց ավիշով»: Իրոք, բանաստեղծի կարճատև կյանքը լի էր մի անդիմադրելի ձգտմամբ ու կարոտով՝ ավելի մոտիկից կապվել գյուղական աշխարհի, նրա մարդկանց ու բնության հետ, իր երգը դարձնել այդ աշխարհի «հարազատ ցոլացուցիչը»:

Բնության յուրաքանչյուր անկյունում բանական սկզբունք և ընդհանուր կյանքի անհունության անդրադարձումը տեսնելու ձգտումը Մեծարենցին տանում է դեպի բնությունը մարդկայնացնելու և աստվածացնելու մոտիվները և հաճախ ավարտվում է նրա հետ խառնվելու, միաձուլվելու, բոլոր իրերի կյանքով շնչելու տրամաբանությամբ:

Ընկե՜ր ըլլալ ցորեններուն. մրգաստանին
Դուռը բանալ զավկի մը պես. մտերմորեն
Ու թողուլ, որ շահարիկներ ըզքեզ տանին
Թևապարփակ՝ լայն լռության մը համորեն:
Հոն շրջասփյուռ ծառերուն հետ եղբայրանալ…

Մեծարենցի կերտած գյուղական բնության և աշխատանքի տեսարանները ժամանակակից արևմտահայ գյուղի ամբողջական պատկերը ներկայացնել չէին կարող: Բանաստեղծը գերազանցապես մնում էր ռոմանտիկական հովվերգության սահմաններում. գեղանկարում միայն գյուղական կյանքի բանաստեղծական կողմերն են: Դրա պատճառն ինքը՝ Մեծարենցը համարում էր այն, որ իր երգերում նա ստիպված է եղել հենվել միայն մանկական հիշողությունների վրա, որոնք բավական չէին «հզոր լիություններ արտահայտելու համար»: Այստեղից էլ՝ գյուղ վերադառնալու, «հողին, ջրին ու քարին հետ ապրելու» ստեղծագործական պահանջը, որը մնաց չիրագործված: Բայց և այն, ինչ այդ ուղղությամբ նա հասցրեց անել, հասարակական և գեղարվեստական մեծ արժեք ունի:

Գյուղական իրականության մեծարենցյան պատկերները խորը սեր և համակրանք էին ներշնչում դեպի աշխատավոր մարդը, գեղջկական և ազնիվ կյանքը: Ըստ էության, դա ժամանակակից հասարակությունից և տիրող ռեակցիայից բանաստեղծի խոր անբավականության, նրանց նկատմամբ ունեցած օպոզիցիայի արտահայտությունն էր:

Գյուղական կյանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի տեսակետից շատ բնորոշ են Մեծարենցի մի քանի արձակ բանաստեղծությունները՝ «Որթին տերևը»՝ հայրենի բնության բանաստեղծական համայանապատկերով, «Ձրին ծառը»՝ մանկական հուշերի և գյուղական ավանդության գեղեցիկ վերապատրաստմամբ և, մանավանդ, «Տճկորին երգը»: Մեծարենցն ուզում էր, որ իր երգը դառնար գյուղացու, հասարակ մարդու սփոփանքի ու գեղեցիկ երազների աղբյուր, և «Տճկորին երգը» դրա ուղղակի արտահայտությունն է: Դա, հիրավի, «իղձ մը, արցունքի մը պես պարզ ու վճիտ» մի երգ է, որը, ասես մի շնչով, բխել է բանաստեղծի սրտից ու հոգուց և, «իրիկվան ոսկի հրեշտակին հետ թև առած», թռել է սարերն ի վեր, կապույտն ի վեր», դեպի հեռու լեռներում ծվարած գյուղը, դեպի աշխատանքից հոգնած «բարի մշակները»: Եվ հնչում է բանաստեղծի հրավերը՝ լեցուն արոտների շնչով, հնձված արտերի ու հերկված հողերի բույրով, «անանուն դողերով, անհամար թրթռումներով»: «Ցերեկվան արևին հուրքովը գինովցած պարտասուն հոգիներ. ճերմակ լաթերով դա՛շտի մշակներ, եկեք ունկնդրել իմ երգիս. իմ երգիս, ուր բյուրազան բուրմունքների խուրձ մըն է, իմ երգիս, ուր ձեր քրտինքին, ձեր երանությանց ու ցավերուն աղաղակը, ձեր սիրեկան հովերուն, ձեր սիրեկան ջուրերուն, ձեր սիրեկան, մտերիմ դրացի արագիլներուն ու թռչուններուն համերգությունը կա թառած… Ալ թողեք բանը, հերի՛ք հերկեցիք, հերի՛ք հողին նայեցաք, հերի՛ք անոր հսկեցաք այսքա՛ն

ատեն… Ո՛վ բարի մշակներ ականջ դրեք իմ երգիս, ուռենիներու շուքին տակ, հովտին խորը»:

Գյուղական բնության ու կյանքի պատկերները տիրապետող են նաև «Հովվերգություն մը» շարքում, «Շերամին նինջը», «Մտերմիկ տեսիլներ» և, մանավանդ, «Ջրտուք» բանաստեղծություններում: «Ջրտուքը», որը Մեծարենցի տաղանդի ամենավառ դրսևորումներից մեկն է, գրավում է ոչ միայն բնության պատկերների զարմանալի շոշոփելիությամբ, լույսի և ստվերի խաղերով, այլև հողի աշխատավորի սեղմ ու դիպուկ նկարագրությամբ:

Գիշերային ջրտուքի ժամն է, լույսին մեջ կայնած
Մըշակն անքուն կըսպասե՛, ոտքը բոպիկ, բահն ուսին,
Պարտեզներուն վրա կիջնե թեթև քողք մը միգամած,
Ու ծղրիդներ՝ լուսնակով արբշիռ՝ անվերջ կը խոսին:

Այս բանաստեղծության մեջ գծագրված վիթխարի բնանկարը, որն ընգգրկման լայնության, մեծ չափերի հետ միասին աչքի է ընկնում նաև բնության ու աշխատանքի՝ նույնիսկ աննշան թվացող մանրամասների վերարտադրությամբ, ավարտվում է գեղջկուհու երգով, որը մեղմ տարածվում է գյուղակի վրա, ողողելով ամբողջ պատկերը մի հատուկ քնարականությամբ.

Աղջնակ մը, արիշին տակ նստած, լե՛ր կկանչե,
Որ հոգնաբեկ մշակին օրորի մը պես կուգա,
Հողը ծընեց ջուրերուն տարփանքին՝ որ դեռ կը հնչե
Եվ հիմակ՝ թա՛ց կը խոկա իր երկունքին ապագա:

Բնության հետ միաձուլվելու տենչանքը հիմք է ծառայել արծարծելու նաև բանաստեղծի հասարակական կոչման հարցը: Դրան է նվիրված վերջին՝ «Բաղձանք» բանաստեղծությանը: Այստեղ քնարական հերոսը ցանկանում է լինել դեպի գագաթներ բարձրացող ճանապարհ, որպեսզի այնտեղ տանի ձանձրացած «սպառած հոգիները» և ցույց տա «լայն հորիզոն անուրջի»: Եվ գնալով այդ պատկերի իմաստն ավելի որոշակի է դառնում. բանաստեղծն ուզում է լինել դաշտերի և այգիների վրա սավառնող հովի խմբերգ, աղբյուրների ու լճերի մեղմածավալ մրմունջ, օվկիանոսի ու գետերի հզոր շառաչ, որպեսզի բնության այդ համայնական կայտառ ձայներով «քերթողներուն հոգին լեցվեր ամայի».

Երգն ըլլայի թռչուններուն ծնծղաձայն,
Ու դառնայի ուրախության ճիչ մը լայն
Բանաստեղծի հոգիներուն մեջ նըկուն,
Ուր կը թախծի խոհանքն ամպոտ, անանուն…

«Մեղուներ», «Նավակները» բանաստեղծությունները ամբողջական փոխաբերություններ են:

«Մեղուները», օրինակ, մի փոխաբերական պատկեր է մտածող մարդու երազների ու սպասումների մասին: Մեծարենցն իր տենչերը համեմատում է տարագնացիկ մեղուների հետ, որոնք երամ-երամ կիսաթափանցիկ մշուշներից թռել-գնացել են հեռավոր ծաղկաստաններ: Սպասում է նա մեղուներին, այսինքն՝ իր տենչանքների իրականացմանը, սպասում է տագնապով ու հույսով: Բայց մեղուները չեն վերադառնում ու չեն բերում տենչանքների մեղրը:

Նուրբ են Մեծարենցի փոխաբերական համեմատությունները, որոնցով կառուցված են նույնիսկ ամբողջական բանաստեղծություններ:

Ա՜հ սիրտս է ան, սիրտըս, գիշերը մըթին,
Աշնան գիշերը լացող,
Կամ՝ Տենչանքներըս, տարագնացի՜կ մեղուներ,
Ոսկի երիզ մը բանալով
Ու զանակներ անձրևելով
Թռան գնացին երամ-երամ…

Նման համեմատությունների ու մակդիրների հմուտ օգտագործումը մեծացնում է երգերի հոգեբանական ուժը: Այս իմաստով Մեծարենցը հոգեհարազատ է Սիամանթոյին: Երկու բանաստեղծի համար էլ ուսուցիչ է եղել փոխաբերությունների հանճարեղ վարպետ Գրիգոր Նարեկացին:

Արևմտահայ պոեզիայի մեջ Մեծարենցն սկզբնավորում է նաև աշխատանքի երգը՝ կանխելով Դանիել Վարուժանի հացին երգը: Նա տպավորիչ գույներով ցուցադրում է աշխատանքի գեղեցկությունը:

Գեղեցիկ են նաև գյուղի գիշերային պատկերները: Պարտեզների վրա իջնում է միգամած քողը, երկարում է շրիդների, բարբառի լուսարծաթ ժապավենը, այստեղ-այնտեղ վառվում են խարույկները: Լուսնի լույսի տակ տարածվում, մեծանում են ժայռերի, վանքի, բակի ծառերի ստվերները՝ օրորելով քնած գյուղը:

Մեծարենցի սիրո երգերը

Մեծարենցի սիրո երգերը չունեն բազմազան տրամադրություններ, վիճակներ ու հակասություններ, որոնք բնորոշ են, ասենք, Ավ.Իսահակյանի և Վահան Տերյանի պոեզիային: Մեծարենցն ունի սիրո երգի իր ուրույն աշխարհը, որի մեջ հասնում է բացառիկ նրբավորումների: Դրանք անաղարտ սիրո նվագներ են, որոնց հատուկ են պատանեկան թռիչքն ու երազանքի ճախրը:

Տառապալի գիշերներին, իրիկնային մենության ու հածումների մեջ, նրա հոգուն խաղաղություն է բերում անհասանելի աղջկա պատկերը: Արևի տակ, այգաբացի շողերի մեջ, գարնան զարթոնքին, հոգու վերածնության պահերին նա ապրել է երազ-կնոջ տեսիլներով: Ահա «Այգերգում» իր նվիրական գաղտնիքն է բացում արևի կարոտ հիվանդ պատանին:

Քիչ մըն ալ դու՛ն ժպտեիր, ա՜հ հոգվույս համար `
որ հիվա՜նդ է.
Նայվածքի խաղ՝ որով դառնա աշխարհն ինծի
ծափ ու ծաղիկ.
Տարիներով իմ երազս էր սիրո գարուն մը խաղաղիկ,
Քիչ մըն ալ դու՛ն ժպտեիր , ա՜հ հոգվույս համար՝
որ հիվա՜նդ է:

Սիրո երգերում ավելի է զուլալվում բանաստեղծի հայացքը. նա բնական երանգներ է տալիս կնոջ պատկերին՝ պահպանելով հիացումը: Մեղմիկ ծածանելով լաչակը, սափորն ուսին՝ աղբյուրից դառնում է չքնաղ աղջիկը: Նրա վարսերի մեջ սողոսկել է արևի ոսկե ճառագայթը: Իսկ բանաստեղծի ծարավ հոգին երազում է աղջկա ձեռքից երկու կաթիլ ջուր՝ իր չոր շուրթերի ու վառվող ճակատի համար: Առանձին հմայք ունի «Վայրկյանը» բանատեղծությունը, որտեղ սիրո երգերի մեջ էլ Մեծարենցն արտահայտում է խոր մարդասիրություն՝ ամբողջացնելով մարդու և գեղեցիկի մասին ունեցած իր պատկերացումները: Սերը ծնվում է՝ անանձնական ուրախություն բերելու աշխարհին, կարոտյալներին, խավարի մեջ խարխափող խրճիթներին, ուրախության զգացումներ՝ ծերերին, կույսին, մանկան, «պարզ մարդերուն՝ գեղջուկներուն ու բանվորին»:

Այս խոհերն արծարծված են «Տու՛ր ինծի , Տե՜ր…» բանաստեղծության մեջ:

Եզրակացություն

Մեր գրականության մեծերը նաև իրենց ապրած կյանքով, դրանց առանձին դրվագներով , որոնք առանձնապես հետաքրքիր են, հուզիչ ու գրավիչ, նպաստում են սովորողների համամարդկային լավագույն հատկանիշների դաստիարակության ու ամրակայման գործին: Գաղտնիք չէ, որ շատ սովորողներ, սիրելով այս կամ այն ուսուցչին ու պատկառանք զգալով նրա նկատմամբ, մի առանձին նվիրվածությամբ ու սիրով են սովորում նրա դասերը: Հատկապես գրականության ուսուցիչը պետք է նմանատիպ զգացում առաջացնի հայ գրողների անձի նկատմամբ: Իսկ դրա հնարավորությունն անսպառ է: Բազմաթիվ հուշագրություններ, ակադեմիական հրատարակությունների ծանոթագրություններ դրա համար մեծաքանակ ու բազմաբնույթ նյութ են պարունակում: Ուսուցիչը բծախնդրությամբ ու պատասխանատվությամբ պետք է նման լավագույն հատվածները, անհրաժեշտության դեպքում մշակելով, ներկայացնի սովորողներին, գայթակղի ու հրապուրի հեղինակի հուզառատ ներաշխարհով, արկածալից, հերոսական կյանքով ու արարքներով, անձնազոհությամբ, անսահման հայրենասիրությամբ, նրա առաջին սիրո պատմությամբ:

Միսաք Մեծարենցն իր մտքերով, հույզերով, տարերքով ու վարպետությամբ զարմանալի ամբողջական անհատականություն է: Ժամանակից շուտ հասունացած՝ պատանի բանաստեղծը թողել է հավերժական երգեր: Մեծարենցը խորն էր հակացել բանաստեղծության դերն ու կոչումը: Բանաստեղծին չկարողացան շփոթեցնել գրական մոլոր ուղղությունները: Նա զգաստ էր նաև իր երգերի նկատմամբ:

Մեծարենցը չի ժխտում բանաստեղծ անհատի հոգեկան աշխարհի նշանակությունը՝ երգի ստեղծման մեջ: Միայն թե, նրա կարծիքով բանաստեղծ անհատի հոգին պետք է լցված լինի շրջապատող աշխարհի լիությունով, կյանքի և բնության հարազատ ձայներով ու գույներով:

Մեծարենցի քնարերգության մեջ էականը երիտասարդ մարդու հոգեկան դրաման է: Նա չափազանց զգայուն էր կյանքի տված ցավերի նկատմամբ, ուներ իր հիվանդությունն ու հոգեկան դրաման, որոնք ավելի են զորացրել տառապանքի ու երազների երգը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ն.Վիրաբյան, Լ.Մարգարյան «Հետաքրքրաշարժ զրույցներ գրականությունից»
2. Հայ նոր գրականության պատմություն
3. Դ.Գասպարյան, Հ. Թամրազյան, Ժ. Մալանթարյան «11-րդ դասարանի Հայ Գրականություն»